ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

"11" 03 2021 թ. N 195-Հ

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 1012-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 698-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում քաղաքացիների ընդունելության ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 2016 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը և ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի 2012 թվականի հուլիսի 14-ի թիվ 367-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1012-Ա հրամանը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գլխավոր քարտուղարին:

3/11/2021

X

ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿՅԱՆ

Signed by: ARSHAKYAN HAKOB 2604850273

ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿՅԱՆ

Հավելված №1

Հայաստանի Հանրապետության
բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության
նախարարի 2021 թվականի
մարտի 11-ի N 195-Ա
հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարությունում (այսուհետ՝ նախարարություն) քաղաքացիների ընդունելության (այսուհետ՝ ընդունելություն) կազմակերպումը:

2. Նախարարությունում քաղաքացիների ընդունելությունն իրականացնում են նախարարը, նախարարի առաջին տեղակալը, նախարարի տեղակալները և գլխավոր քարտուղարը:

3. Նախարարությունում քաղաքացիների ընդունելությունը կազմակերպում է նախարարության գործերի կազմակերպման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

4. Քաղաքացիների ընդունելությունը նախարարի հանձնարարությամբ կարող են իրականացնել նախարարի տեղակալներից որևէ մեկը կամ նախարարության գլխավոր քարտուղարը՝ ինչի մասին Վարչությունը նախապես տեղեկացնում է ընդունելության հերթագրված քաղաքացիներին:

5. Ընդունելությանը հերթագրվելու համար քաղաքացիները կարող են դիմել նախարարություն՝ բանավոր կամ գրավոր հայտով կամ գրանցվել էլեկտրոնային հարցումների միասնական հարթակում՝ https://e-request.am/՝ նշելով անունը, ազգանունը հեռախոսահամարը, հարցի էությունը կամ նպատակը:

6. Ընդունելության հերթագրմանը չեն կարող մասնակցել այն քաղաքացիները, ովքեր նույնաբովանդակ հարցով ընդունելության են եղել նախարարի մոտ:

7. Սույն կարգի 5-րդ կետի պահանջները բավարարող հայտերը հաստեագրվում են Վարչություն և գրանցվում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգում՝ ընդ որում որպես «փաստաթղթի տեսակ» նշվում է «ընդունելություն»: Վարչությունը ոչ ուշ քան դիմումը ստանալուց 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է դիմողին ընդունելության օրվա, ժամի և տևողության մասին: Եթե գրավոր դիմումում նշված հանգամանքների ուսումնասիրությամբ պարզվում է, որ քաղաքացին ենթակա չէ ընդունելության ներկայանալու՝ նա այդ մասին տեղեկացվում է գրավոր:

8. Նախարարի մոտ ընդունելության համար հերթագրվում են այն քաղաքացիները, ովքեր գրավոր դիմել են նախարարությանը, սակայն ներկայացված խնդիրների վերաբերյալ չեն ստացել իրենց կարծիքով բավարար պատասխան, ինչպես նաև ընդունելության են եղել նախարարի առաջին տեղակալի կամ նախարարի տեղակալներից որևէ մեկի (ըստ ոլորտների), կամ գլխավոր քարտուղարի մոտ և այդ ընդունելության արդյունքները չեն բավարարել:

9. Առանձին դեպքերում, հաշվի առնելով բարձրացված հարցի հասարակական հնչեղությունը կամ հրատապ լուծման անհրաժեշտությունը, նախարարի տեղակալների կամ գլխավոր քարտուղարի առաջարկությամբ նախարարը կարող է հանձնարարել կազմակերպել՝ արտահերթ ընդունելություն: Արտահերթ ընդունելության դեպքում սույն կարգի 8-րդ կետի դրույթները չեն տարածվում:

10. Նախարարի մոտ ընդունելության հերթագրումը դադարեցվում է յուրաքանչյուր ընդունելությունից 3 (երեք) աշխատանքային օր առաջ: Նշված ժամկետից հետո ներկայացված հայտերը ներառվում են հաջորդ ընդունելության ցուցակում:

11. Վարչությունն ընդունելությունից 2 (երկու) օր առաջ նախարարին ներկայացնում է հերթագրված քաղաքացիների ցուցակը և հարցի համառոտ բովանդակությունը:

12. Նախարարի հանձնարարությամբ իր մոտ ընդունելությանը կարող են մասնակցել նախարարի տեղակալները, նախարարության գլխավոր քարտուղարը, նախարարության ստորաբաժանումների ղեկավարները և այլ պաշտոնատար անձինք:

13. Քաղաքացիների ընդունելության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն,որը ստորագրվում է կազմողի և այն պաշտոնատար անձի կողմից ում մոտ կայացել է ընդունելությունը:

14. Քաղաքացիների ընդունելության վերաբերյալ տեղեկատվությունը հասարակության հետ կապերի բաժինը կիսամյակը մեկ տեղադրում է նախարարության կայքէջում:

Հավելված №2

Հայաստանի Հանրապետության
բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության
նախարարի 2021 թվականի
մարտի 11-ի N 195-Ա
հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

Պաշտոնը, Անուն, ազգանուն	**Ընդունելության օրը, ժամը**
Նախարար	Յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը (ըստ անհրաժեշտության հնարավոր է օրվա և ժամի փոփոխություն կատարել)
Նախարարի առաջին տեղակալ (շուկայի զարգացում,միջազգային հարաբերությունների, գիտատեխնիկական և տիեզերական ոլորտների քաղաքականություն)	Յուրաքանչյուր երկուշաբթի (ըստ անհրաժեշտության հնարավոր է օրվա և ժամի փոփոխություն կատարել)
Նախարարի տեղակալ (բարձր տեխնոլոգիաներ,ինովացիա և ծրագրերի կառավարում)	Յուրաքանչյուր երեքշաբթի (ըստ անհրաժեշտության հնարավոր է օրվա և ժամի փոփոխություն կատարել)
Նախարարի տեղակալ (կապ,թվայնացում,հեռահաղորդակցություն,փոստ,համացանց և կիբեռանվտանգություն)	Յուրաքանչյուր չորեքշաբթի (ըստ անհրաժեշտության հնարավոր է օրվա և ժամի փոփոխություն կատարել)
Գլխավոր քարտուղար	Յուրաքանչյուր հինգշաբթի (ըստ անհրաժեշտության հնարավոր է օրվա և ժամի փոփոխություն կատարել)